

ԿՈՂԲԱՅ ԱՂԱՀԱՆՔՆ

ՀՍՏ Ն. ԲԱՐԲՈՏԱՅ-ՏԵ-ՄԱՌՆԻ

ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐԱԶԱՓԻ



Կողբայ քարաղի բնավայրն, որ թէ առատութեամբ և թէ զտու-
թեամբ առաջինն է բովանդակ Անդրակովկասու մէջ, կ'ընկնայ Երեւ-
անու նահանգին Սուրմառի վիճակին արեւմտեան անկիւնը, 44 վերստ
հեռաւորութեամբ իկդիր գեղջէն, որ վարչական կեդրոնն է յիշեալ
վիճակին: Աղահանքս կը տարածուի թաքեալգու լեռան բարձր և առ-
անձնակ կոնին ստորոտը, Երասխայ գետահովտին աջ ափանց վրայ:
Այս տեղւոյս յատակն՝ որ մշտնէ մ'աւելի տարածութիւն ունի, շրջա-
կայ գետինն մէջէն կտրելով՝ տարածուած և ձևացած է ջրոց սուզմամբ
և դիրտերով, բարձրագիր խաւերով, ամփոփելով իւր մէջ ամբողջ
դիրք մը խորածորոց և հեղեղատաց, քան զորս աւելի կը քայքայեն
գետինը երկրորդական հեղեղք, որք առաջնոց մէջ կը թափին. և
այսպիսի ներգործութեամբ՝ առ 'ի շեղ գետինն տակաւ ցածնալով,
պզտի բլրակաց նման առանձին կտորներ վար կը գլորին ասդիս ան-
դին:

Երասխայ աջ ափին վրայ երկու համանման ձորակներով կ'անջա-
տի բաւական մեծութեամբ տափարակ մի, որ գրեթէ եռանկեան
ձև ունի. ասոր հիւսիս—արեւելեան կողմն կ'ուղղի յերասխայ, հա-
րաւայինն՝ խորայտակ Աձի—չայ գետով, իսկ արեւմտեանն՝ որ կը
նայի դէպ 'ի թաքեալգու՝ կ'որոշի վարդեմարզ գետոյն երկար ձորա-
կոճն: Արեւմտեան ափն յետին ձորակիս, որ քիչ քիչ կը բարձրանայ
(միջին բարձրութիւնն է 100 մեզր), և գրեթէ ամբողջովին կարծր
քարաղով ձևացած է, է բուն աղայեալն Կողբայ: Այս գետափս
երկայնեալ իբրև 2 մշտն, (որ խիստ դժուարեւանելի է և տեղ տեղ
գրեթէ բոլորովին ուղղահայեաց), կը ներկայացնէ չարունակութիւն
մի մերկ բրածոյից, և միայն հիւսիսային և հարաւային կողմերն հե-
ռոտած են խորանդունդ հեղեղատներով: Իսկ թէ մէկն դարձնելու ըլլայ
աչքը դէպ 'ի աղահանքը, կը տեսնէ զայն միապաղաղ կանգնած՝
ցույցընելով իւր համբաւեալ ճոխութիւնը: Կազմուածն է նորա-
ճնունդ անուանեալն ըստ երկրաբանից, լուծայական խաւի ներքև
ծածկուած:

Բովանդակ՝ աղահանքս կազմուած է առ նուազն հինգ ոսպնածև
զանգուածովք, միանգամայն 170 մեզր թանձրութեամբ, որոց իւ-
րաքանիւրին լայնութիւնք են հետեւեալքն. առաջնոյն՝ մինչև 3 մե-

գըր, երկրորդին՝ 37, երրորդին՝ իւր 85, չորրորդին՝ 25, իսկ հինգերորդինն է 20 մեգր:

Այն առհասարակ կաւի խառնուրդով կ'երևնայ, որ կարծես անկարգ կերպով բոլորովին կը պատէ զայն, և անտի յառաջ կու գայ այն գորշ գոյնն. բայց այն աղերուն մէջ զոր երրորդ շատ փորուած զանգուածէն կը հանեն, կաւային խառնուրդն գրեթէ ոչինչ է, իսկ տեղ տեղ բոլորովին զուտ է աղն. ասոր բաղադրութիւնն ալ միջին և մեծաբիւրեղեան է, և երբեմն ևս ժապաւենած և Շատ գեղեցիկ և կանոնաւոր կերպով դիզուած են վրայէ վրայ աղի շերտերն, գրութիւննին ալ հորիզոնական չէ. այլ լեռան կողին վրայ դիտելով, կը տեսնուի ներսը նոցա զառիվայր դիրքն, որ միջին հաշուով 22⁰ անկեան կը հասնի, ընդհանուր 50⁰—70⁰ հիւսիս—արևելեան ուղղութեամբն: Արեւմտեան կողմի աղահանքն՝ Աձի—լալի կողմէն, բոլոր ներքեւի գրութեամբն, կը չրլէ իւր խոնարհման անկիւնը գէպ 'ի հիւսիս, պահելով մի և նոյն հակումը: Լեռան հիւսիսային և արևելեան կողերուն վրայ՝ անկման անկիւնն յսնկարծ իմն կը լայննայ աղին մէջ 46⁰, իսկ վարի կողմն՝ աւելի քան 70⁰ հասնելով, ընդհանուր հակման ուղղութիւնն գէպ 'ի հարաւ և արևմուտք է:

Վերոյգրեալը ամբողջապէս կը բացատրեն աղային շերտերուն բռնական շէնքը կամ կազմութիւնը, որք հետեւապէս դիզուած են զառիվայր շեղիւրու ձևով, որոյ առանցքն ուղղեալ է ընդհանրապէս գէպ 'ի արևելք—հիւսիս—արևելք, 15⁰—20⁰ հակմամբ ընդ արևելս. և կը կտրէ զլեռն հիւսիսային մասին մօտ, անցնելով ստորին կողք գիւղին մէջէն: Սորա երկու թևերն անհաւասար կերպով բացուած են. հիւսիսայինն՝ լեռան վրայ փոքրադոյն մասը գրաւած է և խիստ զառիվեր բարձրացած. ընդհակառակն հարաւայինն անոր մեծագոյն մասը կը գրաւէ, ամփոփելով իւր մէջ աղի զլխաւոր զանգուածները, և կը վերջնայ դարեանդաձև: Բաւական երկարութեան վրայ՝ կողքայ աղահանքին ներքեւ ծածկուած ուրիշ նիւթերն (գաճ և կաւ) դիզուած են մեծաւ մասամբ որոշ և զատ 'ի բրածոյից. և ասոր պատճառն է՝ նոյն իսկ զանգուածոց ուղղանալն դիրքն, և փորելուն կերպն կամ առաջնայ պատահած քայքայումն աղի շերտերուն:

